

Հաստատում եմ՝ «Վանաձորի Հովհաննես Տիգրանի անվան պետական համալսարան» հիմնադրամի  
Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի  
նեկոտոք տ.գ.դ., պրոֆեսոր  
Ռ. Սահակյան  
4 դեկտեմբերի 2023թ.



## ԿԱՐԾԻՔ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

### ԼՈՒՍԻՆ ԳԵՂԱՍԻ ՄԱԴԱԹՅԱՆԻ

բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

«Ժամանակ հասկացույթի առկայացումը բրիտանական հեքիաթներում  
(հայկական հեքիաթների զուգադրությամբ)»

Ժ.02.07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
ատենախոսության վերաբերյալ

Լուսիննե Գեղամի Մադաթյանի «Ժամանակ հասկացույթի առկայացումը բրիտանական հեքիաթներում (հայկական հեքիաթների զուգադրությամբ)» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Օտար լեզուների և զրականության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 8, կայացած՝ 27.11.2023թ.):

Մասնակցում էին «Օտար լեզուների և զրականության» ամբիոնի բ.գ.թ., դոցենտ Թադևոս Թադևոսյանը, բ.գ.թ., դոցենտ Լուսիկ Վարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Նինա Զաղինյանը, բ.գ.թ., դոցենտ Կարինն Առուստամյանը, մ.գ.թ., դոցենտ Գայանն Հովհաննիսյանը, բ.գ.թ., ասիստենտ Արինա Դանիելյանը, բ.գ.թ., ասիստենտ Ժաննա Ալոյանը, բ.գ.թ., ասիստենտ Աշխեն Սիմոնյանը և ուրիշներ:

Գրախոսման ներկայացված ատենախոսությունը փորձ է ուսումնահերեւու ժամանակի հայեցակարգավորման և արտապատկերման տարաբնույթ ձևերը

Ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից բրիտանական հեքիաթների համատեքստում՝ հայկականի գուգադրությամբ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է տեքստի ճանաչողական լեզվաբանության դիրքերից իրականացվող հետազոտության նկատմամբ աճող հետաքրքրությամբ:

Աշխատանքի գիտական նորույթը՝ ճանաչողական լեզվաբանության միջոցով ժամանակ հասկացույթի առկայացման գուգամետ և տարամետ հատկանիշների քննությունն է բրիտանական և հայկական ժողովրդական հեքիաթներում, ինչպես նաև ժամանակի հայեցակարգավորման կաղապարումը բրիտանական հեքիաթներում հայկական հեքիաթանյութի գուգադրությամբ:

Ատենախոսության ամուր մեթոդաբանական հիմքն են կազմում ճանաչողական լեզվաբանության հիմնադրույթները, ժամանակի և տարածության հարաբերակցության տեսությանը, լեզվաբանագիտության գիտակարգի ձևավորմանը և հեքիաթի ժամանակի դասակարգմանն ու հոգերանական մեկնաբանությանը նվիրված աշխատությունները: Հետազոտությունն իրականացվել է ճանաչողական մեկնաբանության և կաղապարաստեղծման, համեմատության և գուգադրման, համատեքստային վերլուծության մեթոդների և մոտեցումների համադրմամբ:

Ակնհայտ է, որ ատենախոսն ուսումնասիրել է բավականին ծավալուն տեսական և գործնական նյութ բացահայտելու ժամանակի հայեցակարգավորման կառուցվածքային ու գործառութային առանձնահատկությունները, դասակարգելու բրիտանական և հայկական հեքիաթներում ամենից հաճախ կիրառվող ժամանակի հայեցակարգավորման հասկացական փոխաբերությունները և փոխանունությունները՝ վեր հանելով դրանց արտապատկերները՝ ճանաչողական հատկանիշները: Հետազոտության արդյունքները ներկայացված են աղյուսակների տեսքով, որոնք բավականին նպաստում են քննարկվող խնդիրների լուսաբանմանն ու մեկնարկմանը:

Ատենախոսության մեջ կատարված աշխատանքը դրական արժենորդելով՝ այնուամենայնիվ, կցանկանայինք նշել որոշ դիտարկումներ և ստանալ որոշ պարզաբանումներ:

1) Կցանկանայինք, որ ատենախոսը մեկնաբաներ հետևյալ քերականական անձշտությունները ատենախոսության երկրորդ գլխում.

- «Ինչպես երևում է վերը նշված օրինակներից, անզլերենում *որոշարկված կետն* արտահայտվում է *appointed* ածականով, իսկ հայերենում՝ *նշանակած հարակատար դերայով*: (On the day appointed with the father of his affianced...) (Էջ 37):
- «Հարաբերական կետը կարող է նաև արտահայտել այնպիսի մակրայներով, ինչպիսիք են անզլերենում՝ today, tonight, this, that, իսկ հայերենում՝ մակրայներով և ցուցական դերանուններով՝ այսօր, այս զիշեր, այս, այդ» (Էջ 39):
- «Տևողությունը անզլերենում կարող է արտահայտվել գոյականական բառակապակցություններով՝ նախդիրների հետ մեկտեղ՝ within, for, in, հետևյալ բայերի հետ՝ go on, last և այլն,.... » (Էջ 43):  
“Well, lo and behold you, in a week’s time he started to work.....” (Էջ 44):  
Արդյո՞ք in a week’s time արտահայտությունն ունի տևողության իմաստ:
- Կցանկանայինք, որ ատենախոսը մեկնաբաներ well մակրայի գործառույթը «The gentleman came well early in the morning» նախադասության մեջ (Էջ 36) և բացատրեր թե ինչո՞վ է պայմանավորված այն չներառելը early in the morning իմաստային խմբում: Չէ՞ որ well մակրայն է վերջինիս հաղորդում արտահայտչականություն: Այս իսկ պատճառով պարզ չէ, թե ատենախոսը ինչ ինկատի ունի «նշված մակրայներ» ասելով. early in the morning, tomorrow at eleven թե՞ հենց (Էջ 37), որովհետև միայն վերջինս կարող է արտահայտել արտահայտչականություն, քանի որ այն սաստկական վերաբերական է և ոչ թե մակդիր. «Հայերենում կիրառվում է *հենց* մակդիրը, որն արտահայտում է ժամանակի ավելի անմիջական, կորկետ ընկալում» (Էջ 36):

2) Ատենախոսության բոլոր գլուխներն անմիջապես սկսվում են ենթագլուխներով, որը մեր կարծիքով այնքան էլ ճիշտ մոտեցում չէ: Ատենախոսության երկրորդ գլուխը չի ավարտվում համառոտ ամփոփումով և/կամ եզրակացություններով:



Կարծում ենք, որ նման գիտական բացերի առկայությունը գրեթե անխուսափելի է ցանկացած գիտական աշխատանքում, իսկ զրախոսվող աշխատանքում դրանք չեն նսեմացնում Լուսինե Մադարժյանի կատարած գիտական հետազոտության արժեքը: Սույն ատենախոսությունը բավականին հետաքրքիր և գիտական առումով արժեք ներկայացնող հետազոտություն է, ինչի շնորհիվ ատենախոսությունն ունի տեսական և գործնական նշանակություն: Ատենախոսության հիմնադրույթները արտացոլված են սեղմագրում և ատենախոսի հրապարակումներում:

Ըստիանուր առմամբ ատենախոսությունը գրված է զրագետ հայերենով, բավականին հստակ ձևակերպումներով և առանց ավելորդաբանությունների: Հեղինակը ցուցաբերել է գիտական աշխատանքով զբաղվելու կարողություն, նրա կողմից իրականացրած աշխատանքը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր կողմից հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

#### Եզրակացություն

Այս ամենը հիմք է տալիս միջնորդելու ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող 009 մասնագիտական խորհրդի առջև՝ Լուսինե Գեղամի Մադարժյանին շնորհելու հայցվող գիտական աստիճանը Ծ.02.07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

Առաջատար կազմակերպություն՝  
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան  
պետական համալսարան» հիմնադրամի  
օտար լեզուների և զրականության  
ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ՝

Թ. Թաղևոսյան

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան  
պետական համալսարան» հիմնադրամի  
գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ՝

Ս. Բեժանյան

